ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"17" հունվարի 2011թ. № 3 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՕԺԱՆԴԱԿՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Մարդահամարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի չորրորդ մասի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.5-րդ կետի «ա» ենթակետի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 26-ի «Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականին մարդահամար, 2010 թվականին փորձնական մարդահամար անցկացնելու և 2011 թվականին անցկացվելիք մարդահամարի համապետական, Երևան քաղաքի և մարզային հանձնաժողովներ ստեղծելու մասին» N301-Ն որոշման 5-րդ կետի և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի մոտ 2010 թվականի դեկտեմբերի 14-ին կայացած խորհրդակցության 28/12 արձանագրության 1-ին կետի «է» ենթակետի դրույթների, որոշում եմ՝

1. Հաստատել 2011 թվականին անցկացվելիք մարդահամարի նախապատրաստական աշխատանքներին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում օժանդակող աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ 2011 թվականին անցկացվելիք մարդահամարի նախապատրաստական աշխատանքներին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում օժանդակելու և 2010 թվականի փորձնական մարդահամարի ընթացքում առաջացած մեթոդաբանական ու կազմակերպական խնդիրներին լուծում տալու ուղղությամբ:
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2010թ. հունվարի 17
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի 2011 թվականի
հունվարի 17-ի N 3-Ա որոշման

Կազմ
2011 թվականին անցկացվելիք մարդահամարի նախապատրաստական աշխատանքներին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում օժանդակող աշխատանքային խմբի

Վ.Գրիգորյան	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի տեղակալ (աշխատանքային խմբի ղեկավար)
Գ.Խաչատրյան	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի պետ
Ս.Հարությունյան	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՀԳՄՏՍ ԳՀ բաժնի պետ
Ռ.Ավետիսյան	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ
Գ.Աղախանյան	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Կապանի տարածքային ստորաբաժանման ղեկավար (համաձայնությամբ)
Ս.Հովհաննիսյան	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Գորիսի տարածքային ստորաբաժանման ղեկավար (համաձայնությամբ)
Կ.Թունյան	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Սիսիանի տարածքային ստորաբաժանման ղեկավար (համաձայնությամբ)
Ս.Կանդազյան	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Մեղրիի տարածքային ստորաբաժանման ղեկավար (համաձայնությամբ)

Ա.Բաբաջանյան	Հայաստանի Հանրապետության Ազգային Վիճակագրական Ծառայության Սյունիքի մարզային գործակալության տարածքային վիճակագրական բաժնի պետ (համաձայնությամբ)
Դ.Հակոբջանյան	Հայաստանի Հանրապետության Ազգային Վիճակագրական Ծառայության Սյունիքի մարզային գործակալության տարածքային վիճակագրական բաժնի գլխավոր մասնագետ (համաձայնությամբ)
Կ.Համամչյան	Հայաստանի Հանրապետության Ազգային Վիճակագրական Ծառայության Սյունիքի մարզային գործակալության տարածքային վիճակագրական բաժնի գլխավոր մասնագետ (համաձայնությամբ)
Ս.Թարվերդյան	Հայաստանի Հանրապետության Ազգային Վիճակագրական Ծառայության Սյունիքի մարզային գործակալության տարածքային վիճակագրական բաժնի գլխավոր մասնագետ (համաձայնությամբ)
Ա.Սարգսյան	Հայաստանի Հանրապետության ոստիկանության վիզաների ու անձնագրային վարչության Կապանի անձնագրային բաժանմունքի պետ (համաձայնությամբ)
Ք.Պողոսյան	Հայաստանի Հանրապետության ոստիկանության վիզաների ու անձնագրային վարչության Գորիսի անձնագրային բաժանմունքի պետ (համաձայնությամբ)
Գ.Ալավերդյան	Հայաստանի Հանրապետության ոստիկանության վիզաների ու անձնագրային վարչության Սիսիանի անձնագրային բաժանմունքի պետ (համաձայնությամբ)
Գ.Ահարոնյան	Հայաստանի Հանրապետության ոստիկանության վիզաների ու անձնագրային վարչության Մեղրիի անձնագրային բաժանմունքի պետ (համաձայնությամբ):

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ Ռ.Ղազարյան